սրահումը և առանձին առանձին սենեկներով, ա-
մէն սենեակ որմնամէջ դարանով, յայտնի կը ցու-
ցընէր յորոց և ինչ վախճանաւ շինուիլը։ Նախ՝
շինողաց ճոխութիւնն յայտնի կ'երևնար, զի փող
չէին խնայել ամրութեան և հաստատութեան մասին.
իսկ առանձին դէմ ընդդէմ միմեանց սենեակներն
իրենց դարաններով, անբարբառ կը զրուցէին որ
իրենք արեղայից և վարդապետաց համար շինուած
են։ Այլ ես զուր տեղ փնտռեցի այդ տանը մէջ եր-
բեմն բնակող Ռոչքան, Մուրատեան, Ստեփանեան,
Վարդերեսեան, Տէր-Գաբրիէլեան, Թադոսեան
վարդապետաց ատուերը կամ շուքը՝ որ մէկ ան-
կիւնէ երևան...։

Շուտով եկաւ եկեղեցւոյն երէցն Տէր Այոզիոս
Շէփայնքի, լեհ ազգաւ, գոնէ այժմ այնպէս
ճանչցուած. հաւանական է որ սա ևս հին Անեցւոց
սերնդոցմէ լինի, այլ այնպէս այլայլած, որ քանի
մի բառ հայերէն յօգնէն զատ, և մարդասէր հիւր-
ընկալութենէն, որ ազգիս սեփական յատկու-
թիւնն է, ամենևին այլ նշան չունէր հայութեան։

Հարկ եղաւ ինձ այդ հայաշէն և հայաբնակ վար-
դապետանոցին մէջ օտար լեզուաւ խօսիլ և հար-
ցընել, մերձաւոր նպատակիս մասին։

Գիտէի արդէն որ Կամենիցի Վերափոխման
Տիրամայր՝ Հայոց եկեղեցւոյն մէջ՝ մեծահանդէս
ութօրէիւ կը տօնուի Աստուածամայր փոխման տօնն,
համանուն եկեղեցւոյն մէջ տօնելով զփոխումն
Կուսին 'ի Թէոդոսիա, կը փափաքէի մասնակցել
նոյն տօնական հանդիսին 'ի տաճարի Աքանչելա-
գործ Տիրամօրս 'ի Կամենից։

Տէր Այոզիոս ինձ իմացուց՝ որ վաղը վերջն է
հանդիսին։ Յոգնած էր ճանապարհէն, քաղցր